



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ՅՈՒՆԻԱՐ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԷԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա ԿԻՍ. ԵՆ ՈՂՈՐՄԵԱ ՔՈ արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 109

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍԲԸ ԿԵԱՆՔԻ ԼՈՅՍ Է

Խօսքդ նրագ է քայլերուս,
յուսաւորոդ՝ նամարներուս:
Երդում ըրի եւ խոստացայ՝
արդար վնիռներդ գործադրել:
Տառապանքս շատ ծանր է, Տէր,
կեանք տուր ինձի, քո խոստումիդ համաձայն:
Աղօթքներս կամաւոր ընծայի տեղ ընդունէ, Տէր,
եւ օրէքներդ ստրկեցուր ինձի:
Թէպէտ կեանքս յարատեւ վտանգի մէջ է,
սակայն Օրէքնդ չեմ մոռնար բնաւ:
Ամբարիշտները ինձի համար թակարդ լարեցին,
սակայն ես չշեղեցայ հրահանգներէդ:
Ինձի յաւիտեանական ժառանգութիւն դարձուցի պատուիրաններդ,
որովհետեւ սրտիս ուրախութիւն եմ անոնք:
Որոշած եմ կանոններդ կատարել,
այդ է յաւիտեանական վարձատրութիւնս:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոգիանի լիցի Ի վերայ Իմ Ի տուէ եւ Ի գիշերի,
Ի նստիլ Ի տան, Ի գնալ Ի նանապարհ,
Ի ննջել եւ Ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆԵՐԻ ՆԱՄԱԿԵՆ

1:12-21

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ԿՈՉՈՒՄԸ (1:12-15)

«Ահա թե ինչու, միշտ ձեզի պիտի յիշեցնեմ այս բաները, թեպետև դուք գիտեք եւ հաստատում կը մնաք ձեր սրբազան ճշմարտության վրայ: Եւ կը կարծեմ թե շիրակ կ'ընեմ ասոնք ձեզի յիշեցնելով, որքան արեւն որ դեռ աշխարհի մէջ եմ, քանի գիտեմ որ շուտով այս աշխարհէն պիտի հեռանամ, ինչպէս մեր Տէրը Յիսուս Քրիստոս յայրնեց ինձի: Ուստի կը ջանամ ձեզ յորդորել, որ այս աշխարհէն մեկնելէ ետքն ալ այս բաները յիշեք» (12-15 հմբ): Այս համարները, ինչպէս նախապէս ալ յիշեցինք, Պետրոս Առաքեալի Ընդհանրական նամակին ամբողջ նպատակը ցոյց կու տան, յիշեցնելու է այն բոլոր ճշմարտութիւնները որ ընդունեցին, որովհետեւ այդ ճշմարտութիւնները խեղաթիրող, այլափոխող մարդիկ կան ու պիտի ըլլան: Նոյնը կ'ըսէ Պօղոս Առաքեալ իր աշակերտին Տիմոթէոսին. «Կը յիշեցնեմ քեզի, որ բոցավառ պահես այն շնորհքը որ Աստուած քեզի տուա՝ երբ քեզ ձեռնադրեցի» (Բ Տիմ 1:6): Տակաւին, ոչ միայն Տիմոթէոսին համար, այլ Տիմոթէոս ալ իր կարքին բոլորին յիշեցնէ (Բ Տիմ 2:14), որովհետեւ կը թելադրէ ըսելով. «Հեռու կեցիր հաւաքքի ճշմարտութիւնները խեղաթիրող վիճաբանութիւններէ, որոնք հետզհետէ մարդիկը Աստուծմէ հեռացնելու կը ծառայեն միայն» (Բ Տիմ 2:16):

Ահա նոյն մրահոգութեամբ, Պետրոս Առաքեալ եւս կ'ուզէ, որ հաւաքացեալները միշտ յիշեն այն ճշմարտութիւնները, որուն ինք անձամբ ականատես ու ականջալուր եղաւ, եւ ըստ այնմ փոխանցեց, որովհետեւ արդէն իսկ ճշմարտութիւնը խեղաթիրող, այլափոխող երեւոյթներ կան, ինչպէս անցեալին նոյնպէս հիմա: Ուստի այս ճշմարտութիւնները շինձու առասպելներ չեն (16 հմբ): Ահա ինչ որ պէտք ու անհրաժեշտ է Աստուածաշունչը Մարեանը կը պարունակէ իր մէջ, ինչպէս պիտի ըսէ Պետրոս Առաքեալ. «Քրիստոս Իր աստուածային զօրութեամբ մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար» (Բ Պետ 1:3): Ուրեմն, որքան զգուշ պէտք է ըլլալ բոլոր տեսակի գրոթիւններու, բացարթութիւններու, որոնք կը փորձեն Աստուածաշունչը Մարեանը ու Անոր տուած ճշմարտութիւնները ըստ այնմ փոխանցելու: Որովհետեւ Աստուածաշունչը Մարեանը պարզ եւ յստակ է ինչ որ պիտի փոխանցէ, սակայն հասկնալու համար Աստուծոյ Հոգին պէտք է ունենալ, որովհետեւ Աստուծոյ շունչով գրուած է: Որովհետեւ չկայ հապուած մը որ ժամանակավրէպ ըլլայ, չկայ բաժին մը որ պէտք ը դուրս դրուի: Ահա թե ինչու պէտք է զգոյշ ըլլալ ինչ գիրք կը կարդանք, ինչ բանի ականջ կու տանք, որպէսզի չըլլայ թէ այդ ճշմարտութիւնը այլափոխող ու խեղաթիրող աղբիւրներ ըլլան:

ՔՐԻՍՏՈՍԻ ՓԱՌՔԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ (1:16-18)

16-17 համարները արդէն դուրս կը բանան այն երեւոյթին, որուն կ'ակնարկէ Պետրոս Առաքեալ, թէ որ ճշմարտութիւնն է որ կը խեղաթիրուի, «մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի զօրութիւնն ու Անոր երկրորդ գալուստը» շինձու առասպել մը չէր, որ Առաքեալները քարոզեցին, այլ ականատեսի ու ականջալուր վկայութեամբ ինչ որ փոխանցեցին, որովհետեւ Պետրոս Առաքեալ ինք ներկայ էր այդ փառքը տեսնելու եւ լսելու, երբ կը պարսմէ Յիսուս Քրիստոսի այլակերպութեան դէպքը (Ղուկ 9:28-36): Որովհետեւ այլակերպութեան դէպքը նախապարաստութիւնն էր Քրիստոսի երկրորդ գալուստին, որ Իր աստուածային փառքով ու զօրութեամբ պիտի յայրնուի: Պետրոս Առաքեալ կ'ըսէ այդ փառքը մենք տեսանք եւ այդ ձայնը մենք լսեցինք, եւ երկու մարգարէները որոնք յայրնուեցան փոխանցելու Քրիստոսի Մեսիայ ըլլալու հանգամանքը եւ Անոր Տառապող Ծառային հանգամանքը: Ինչ որ նաեւ ամբողջ մարգարէական գրականութիւնը Հին Կտակարանեան այդ մէկը ցոյց կու տային: Սա կը նշանակէ որ կարդանք Աստուածաշունչը Մարեանը, ինչպէս պիտի ըսէր Քրիստոս. «Քննեցէք Սուրբ գիրքերը, քանի կը կարծեք թէ անոնցմով յաւիտեանական կեանք պիտի ունենաք. նոյն գիրքերն են որ կը վկայեն իմ մասին» (Յովի 5:39):

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ ԿԱՌՉԻԼ (1:19-21)

Ահա այս ճշմարտութեան լոյսին փակ, Պետրոս Առաքեալ կու գայ ըսելու համար, թէ որքան ուրեմն պէտք է ամուր կառչիլ այն վկայութիւններուն, որոնք փրութեան անցեալի ճշմարիտ մարգարէներուն կողմէ, որոնք կանխեցին, եւ ահա Քրիստոսի ծնունդը, Անոր այլակերպութիւնը, չարչարանքները, խաչելութիւնը, թաղումը, յարութիւնը, համբարձումը կու գան հաստատելու այդ բոլոր մարգարէական ճշմարտութիւնները: Պետրոս Առաքեալ կը շեշտէ ըսելով. «**Հիմա աւելի ամօրէն կապուած ենք մարգարէական վկայութիւններուն. եւ լաւ կ'ըլլայ որ դուք ալ ձեր ուշադրութիւնը դարձնէք անոնց, որովհետեւ անոնք այն ճրագն են, որ մութ փեղը լոյս կու փայ, մինչեւ բացուի այն օրուան արշալոյսը եւ Առաւօտեան Աստուծոյ ծագի ձեր սիրտերուն մէջ**» (19 հմր): Պետրոս Առաքեալ ինք ականջալուր վկան եղաւ այդ ճշմարտութեան: Ինք իր ականջովը լսեց ու փեսաւ այն ինչ որ անցեալին վկայեցին մարգարէները: Իսկ հիմա մեզի կը մնայ հետեւիլ այդ ճշմարտութեան, եւ ոչ թէ նորանոր վկայութիւններ ուզել: Ահա թէ ինչու Աստուածաշունչը Մաքեանը կարդալու կոչ կ'ուղղուի, որովհետեւ այնքեղ է այն ճշմարտութիւնը որ Աստուծոյ շունչով փոխանցուած է մարդուն: Ահա թէ ինչու որքան զգոյշ պէտք է ըլլանք ականջ փայլու ճշմարտութեան: Յովհաննէս Առաքեալ նոյնը պիտի պատուիրէ ըսելով. «**Մի հաւատարմաբ ամէն մարդու՝ որ կ'ըսէ թէ Աստուծոյ Հոգին ունի: Փորձեցէք զանոն, գիտնալու համար՝ թէ իրապէս Աստուծոյ Հոգիով կը խօսին. որովհետեւ բազմաթիւ սուտ մարգարէներ երեւան ելած են աշխարհի մէջ**» (Ա Յովի 4:1): Այս ձեով, կարծէք, Պետրոս Առաքեալ կոչ կ'ուղղէ ամօրէն կառչելու Աստուածաշունչ Մաքեանի հեղինակութեան, յարակութեան եւ բաւարարութեան: Անոր համար ալ Պետրոս Առաքեալ կ'ուզէ վստահ ըլլալ, որ իր այս աշխարհէն մեկնումէն յետոյ ալ յիշեն այս բոլոր ճշմարտութիւնները, հետեւելով Աստուածաշունչ Մաքեանին, Անոր փոխանցած ճշմարտութեան, նոյնիսկ եթէ երբեք կարծուի թէ այնքեղ նշուած ճշմարտութիւնները կարծէք ժամանակավրէպ են այսօր: Առաքեալը յարակօրէն կու գայ ըսելու. «**Որովհետեւ մարգարէութիւնները բնաւ մարդոց կամքին ծնունդը չեն, այլ՝ Սուրբ Հոգիին մղումով է որ Աստուծոյ մարդիկը խօսցան զանոնք**» (21 հմր): Այսօր ալ Աստուած կը խօսի Իր եկեղեցիին նոյն Աստուածաշունչի ճամբով, մանաւանդ՝ երբ Պապարագի ընթացքին կամ ընդհանրապէս Աստուածաշնչական հապուած որ կը կարդացուի կ'ըսուի. «Ասէ Աստուած», որ կը նշանակէ «**Աստուած կը խօսի, պիտի խօսի**»: Այսօր ալ երբ մենք կը լսենք Աստուծոյ խօսքը, չարարուինք խօսողէն, թէ ինչ լաւ խօսեցաւ, այլ՝ մեր կեդրոնացումը ըլլայ նոյնիքն Աստուծոյ խօսքը, որովհետեւ այդ է կարեւորը: